

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 5

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրից պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***


Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1) Նկարում պատկերված է.

- 1) թթվածնի զանգվածի նվազումը՝ ըստ բարձրության
- 2) օդի ճնշման նվազումը՝ ըստ բարձրության
- 3) 1մ^3 օդում առկա թունավոր գազերի զանգվածի նվազումը՝ ըստ բարձրության
- 4) օդի զանգվածի նվազումը՝ ըստ բարձրության



2) Հյուսիսային բևեռային շրջագծի և նրանից հարավ գտնվող Ա կետով անցնող գուգահեռականի միջև իրական ամենակարճ հեռավորությունը կազմում է 2664 կմ: Ա կետի աշխարհագրական լայնությունը կլինի.

- 1) հս.լ 42,5°
- 2) հս.լ 36,5°
- 3) հս.լ 24,5°
- 4) հս.լ 28,5°

3) Երկու կետերի ուղիղ գծով հեռավորությունը քարտեզի վրա 16սմ է, իսկ քարտեզի մասշտաբը՝ 1:2400000: Երկու կետերի իրական հեռավորությունը կլինի.

- 1) 15կմ
- 2) 384 կմ
- 3) 3840կմ
- 4) 150կմ

4) Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Հունիսի 22-ից մինչև սեպտեմբերի 21-ը հս.լ 66°300'-ից հյուսիս բևեռային ցերեկների տևողությունը կրճատվում է:
- 2) Կորիոլիսի ուժի հետևանքով Երկրի վրա հորիզոնական ուղղությամբ շարժվող օբյեկտները (գետեր, քամիներ և այլն) շեղվում են իրենց սկզբնական ուղղությունից հյուսիսային կիսագնդում՝ դեպի աջ, հարավայինում՝ ձախ:
- 3) Երևանի գոտիական ժամանակը առաջ է Տոկիոյի գոտիական ժամանակից:
- 4) Հասարակածի աշխարհագրական լայնությունը 90° է, իսկ բևեռներինը՝ 180°:

(77-78) Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 680 մմ է, իսկ գագաթին՝ 330 մմ:

77 Որոշել լեռան հարաբերական բարձրությունը:

78 Որոշել լեռան բացարձակ բարձրությունը:

(79-80) Երկրի բնակչության թիվը 40 000 000 է, քաղաքաբնակների բացարձակ թիվը՝ 16 000 000, տարածքի մակերեսը՝ 200 000 կմ²:

79 Որոշել ուրբանիզացման մակարդակը:

80 Որոշել բնակչության միջին խտությունը:

5 Այն օդը, որն իր մեջ եղած ջրային գոլորշիներից ավելին չի կարող ընդունել կոչվում է.

- 1) ամպ
- 2) մառախուղ
- 3) չոր օդ
- 4) հագեցած օդ

6 Երկու ջրամերժ շերտերի միջև գտնվող ստորերկրյա ջրերը կոչվում են.

- 1) գրունտային
- 2) հանքային
- 3) միջշերտային
- 4) քաղցրահամ


7 Քարտեզի վրա հավասար մթնոլորտային ճնշում ունեցող կետերը միացնող գիծը կոչվում է.

- 1) իզոթերմ
- 2) իզոհիպս
- 3) իզոբար
- 4) իզոբաթ

8 Երևան քաղաքում հունվարի 10-ին դիտվել է հետևյալ օդի ջերմաստիճանները՝ -5°, -9°, -6°, -4°, 3°, 5°, 2°, -2°: Օդի օրական միջին ջերմաստիճանը կլինի.

- 1) 2°
- 2) 3°
- 3) -2°
- 4) -4°


9 Ռելիեֆի կտրվածքի ո՞ր կետում են թափվում ամենաշատ տեղումներ:



- 1) Ա
- 2) Բ
- 3) Գ
- 4) Դ

10 Նկարում պատկերված է Երկրի դիրքը Արեգակի նկատմամբ.

- 1) հունիսի 22-ին
- 2) սեպտեմբերի 23-ին
- 3) դեկտեմբերի 22-ին
- 4) մարտի 21-ին



11 Բարեխառն ծովային կլիման բնորոշ է.

- 1) Պատագոնիայի արևելյան առափնյա շրջաններին
- 2) Հյուսիսային Ամերիկայի բարեխառն գոտու արևմտյան և արևելյան մասերին
- 3) Ուրալյան լեռներից արևելք ընկած շրջաններին
- 4) Ավստրալիայի ծայր հարավ-արևմտյան մասին

12 Ո՞ր բնական գոնային են առավելապես բնորոշ քանու ներգործության շնորհիվ ստեղծված ռելիեֆի ձևերը:

- 1) սավանաների և նոսրանտառների
- 2) անապատների և կիսաանապատների
- 3) հասարակածային խոնավ, մշտադալար անտառների
- 4) բարեխառն գոտու անտառների


13 Այդ կղզու գրեթե կենտրոնով է անցնում հասարակածը: Այդ կղզին Մալակկայի նեղուցով բաժանվում է Մալակկա թերակղզուց: Այդ կղզին է.

- 1) Կալիմանտանը
- 2) Սումատրան
- 3) Ճավան
- 4) Սուլավեսին

14 Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Հյուսիսային Ամերիկայում լայնակի ձգվող լեռների բացակայության շնորհիվ օդային զանգվածները ազատ շրջանառություն են կատարում՝ երբեմն առաջացնելով հզոր պոստահոդոններ:
- 2) Կալիֆոռնիական սառը հոսանքի ազդեցության շնորհիվ առափնյա շրջաններում քափվում են առատ տեղումներ:
- 3) Մեծ Արջի, Մեծ Ստրուկների լճերը առաջացել են գետահունների լավային արգելափակման հետևանքով:
- 4) Հյուսիսային Ամերիկայի հյուսիսային ծովեզրերին՝ հարակից կղզիների տարածքում, տարածվում է խառը և լայնատերև անտառների գոնան:


75 Քարտեզի վրա ՀՀ հողային ո՞ր տիպն է նշված Ա տառով:



- 1) կուլտուր-ոռոգելի հողեր
- 2) անապատակիսաանապատային
- 3) աղուտ-ալկալի հողեր (աղուտներ)
- 4) լեռնային սևահողեր

76 Որոշել գետի հոսքը 1 ժամում, եթե գետի ջրի արագությունը 1.5 մ/վ է, իսկ գետահունի լայնակի կտրվածքի մակերեսը 6մ²:

Տրվածներից ո՞րն է գրադեցնում քարտեզի վրա Ա տառով նշված տարածքները:



- 1) փշատերև անտառները
- 2) տունդրան և անտառատունդրան
- 3) արկտիկական անապատները
- 4) անտառատափաստանները և տափաստանները

15

Ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Ավստրալիայի հյուսիս-արևելյան ափերը ողողող Կորալյան ծովի մակերևութային տաք ջրերում բուռն զարգանում են կորալային պոլիպները:
- 2) Ավստրալիայի մակերևույթի հիմքում ընկած է Ավստրալիական հնագույն պլատֆորմը:
- 3) Ամենաշատ տեղումներ ստանում են Մեծ Ջրբաժան լեռնաշղթայի հյուսիսային հատվածի հողմակողմ լանջերը:
- 4) Էվկալիպտները տարածվում են բացառապես անապատների և կիսանապատների զոնայում:

16

«Նեղուց-դրանով բաժանված կղզի» սկզբունքով կազմված գույգերից ո՞րն է ճիշտ:

- 1) Մագելանի-Հրո Երկիր
- 2) Բար-Էլ-Մանդեբի-Մադագասկար
- 3) Թորեսի-Թայվան
- 4) Բերինգի-Գրենլանդիա

17

«Լեռնային համակարգ-լեռնագագաթ» սկզբունքով կազմված գույգերից ո՞րն է ճիշտ:

- 1) Մեծ Կովկաս-Արարատ
- 2) Անտարկտիկական Անդեր-Ակոնկագուա
- 3) Ապալաչներ-Կոսցյուշկո
- 4) Էլբուրս- Դեմավենդ


18

Ասիա աշխարհամասում հոսող գետեր են.

- 1) Օբը և Ինգուրին
- 2) Դնեպրը և Դոնը
- 3) Վոլգան և Դանուբը
- 4) Թեմզան և Հոենոսը

19 Քարտեզի վրա ո՞ր տառով է նշված Վիկտորիա լիճը:

- 1) Ա
- 2) Բ
- 3) Գ
- 4) Դ



20 Քարտեզի վրա ո՞ր տառով է նշված Պրետորիա մայրաքաղաքը:

- 1) Ե
- 2) Զ
- 3) Է
- 4) Ը

21 Որոշակի տարածքում բնակչության տեղաբաշխումը և վերաբաշխումը՝ ըստ բնակավայրերի ու դրանց համակարգերի կոչվում է.

- 1) միգրացիա
- 2) ուրբանիզացում
- 3) բնակչության տեղաբաշխում
- 4) տարաբնակեցում

22 Բնական շարժի հետևանքով մարդկանց սերունդների անընդհատ վերարտադրության և հերթափոխման գործընթացի ամբողջությունը կոչվում է.

- 1) ժողովրդագրական պայթյուն
- 2) ժողովրդագրական ճգնաժամ
- 3) բնակչության վերարտադրություն
- 4) բնակչության մեխանիկական շարժ

23 Հարավ-Արևելյան Ասիայի այդ երկիրն ամբողջությամբ ընկած է կղզիների վրա: Բնակչության մեծ մասը դավանում է քրիստոնեություն: Այդ երկրում կաուչուկի հումք են ստանում նաև կոկոսյան արմավենուց: Ո՞րն է այդ երկիրը:

- 1) Ինդոնեզիա
- 2) Ֆիլիպիններ
- 3) Բրունեյ
- 4) Սյամմա

69 Ի՞նչն է ընդհանուր Գյումրի և Հրազդան քաղաքների համար:

- 1) երկաթուղային հանգույցներ են
- 2) նրանց միջով է հոսում Հրազդան գետը
- 3) գործում են հզոր ջերմաէլեկտրակայաններ
- 4) գործում են ցեմենտի արտադրության խոշոր ձեռնարկություններ

70 ՀՀ տրված մարզերից որի՞ տարածքում է գտնվում «Դիլիջան» ազգային պարկը:

- 1) Սյունիքի
- 2) Տավուշի
- 3) Շիրակի
- 4) Արարատի

71 Ո՞ր գույգում են տրված խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակով աշխարհի առաջատար երկրները:

- 1) Ճապոնիա և Ղազախստան
- 2) Հնդկաստան և Բրազիլիա
- 3) Թուրքիա և Աֆղանստան
- 4) Իրան և Մոնղոլիա

72 Տրվածներից ո՞րն է մթնոլորտի աղտոտման հետևանք:

- 1) ստորերկրյա ջրերի մակարդակի բարձրացում
- 2) էրոզիոն երևույթների զարգացում
- 3) գերխոնավ հողերի բերրիության անկում
- 4) ջերմոցային էֆեկտի առաջացում

73 Ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Անտառապատ տարածքների կրճատումն ուղեկցվում է գեոֆոնդի աղքատացմամբ:
- 2) Ջերմոցային էֆեկտի հետևանքով բարձրանում է ներքնոլորտի տարեկան միջին ջերմաստիճանը:
- 3) Մթնոլորտի մարդածին աղտոտման աղբյուրներից է մետաղաձուլությունը:
- 4) Ջրավազաններն աղտոտող հիմնական նյութերը աերոզոլներն(օդակախույթ) են:

63 **Բնութագրումով որոշել երկիրը:**

Հարավ-արևմտյան Ասիայի տարածքի մեծությամբ երկրորդ երկիրն է: Երկրի հարավային ափերը ողողում են Հնդկական օվկիանոսի ջրերը: Բնակչության մեծ մասը դավանում է մահմեդականության շիա ուղղությունը: Ո՞րն է այդ երկիրը:

- 1) Իրան
- 2) Թուրքիա
- 3) Հնդկաստան
- 4) Աֆղանստան

64 **Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ:**

- 1) Շրջապատված է եզրային լեռների համակարգերով:
- 2) Մեծ Մասիսից դեպի արևմուտք ձգվում է Հայկական Պար լեռնաշղթան:
- 3) Բացակայում են գործող հրաբուխները:
- 4) Ամենաբարձր գագաթն ունի ավելի քան 5000 մ բարձրություն:

65 **Ո՞ր պնդումն է ճիշտ:**

- 1) Փամբակի և Ծաղկունյաց լեռները արտաքին շարի լեռներ են:
- 2) Գեղամա լեռնավահանը ճառագայթաձև մասնատվել է Գեղարոտի, Ամբերդի խոր հովիտներով:
- 3) Եղնախաղի լեռնավահանը ձգվում է Հայաստանի և Թուրքիայի պետական սահմանի ուղղությամբ:
- 4) Բարգուշատի և Մեղրու լեռնաշղթաները մասնատված են Արփայի և Արաքսի գետահովիտներով:

66 **Տրվածներից ո՞րն է բնորոշ ՀՀ չոր մերձարևադարձային կլիմայի տիպին:**

- 1) ձմեռը կարճատև է և մեղմ
- 2) տեղումների միջին տարեկան քանակը հասնում է 800-900 մմ-ի
- 3) օդի միջին հունվարյան ջերմաստիճանը տատանվում է +10⁰-ի շուրջ
- 4) տարածվում է 1500-2000 մ բարձրություններում

67 **Ո՞ր պնդումն է ճիշտ:**

- 1) ՀՀ բնակչության կեսից ավելին բնակվում է 1500-2500 մ բացարձակ բարձրության գոտում:
- 2) Բնակչության թվով երրորդ քաղաքը Գյումրին է:
- 3) Արարատյան դաշտին բնորոշ է գծային տարաբնակեցումը:
- 4) ՀՀ-ն հարևան պետությունների համար բնակչության բարձր խտություն ունեցող երկիր է:

68 **ՀՀ գյուղատնտեսության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:**

- 1) ՀՀ գյուղատնտեսության առաջատար ճյուղը անասնապահությունն է:
- 2) Հացահատկի ցանքատարածություններում գերակշռում է աշնանացան ցորենը:
- 3) Խաղողի մշակության գլխավոր շրջաններից է Լոռու սարահարթը:
- 4) Խաղողի մշակության վերին սահմանը 2100-2200 մ բացարձակ բարձրություններն են:

24 **Երկրում ածխի պաշարները կազմում են 2,4մլրդ. տ: Արդյունահանման տարեկան չափը պահպանելու դեպքում այն կբավականացնի 375 տարի: Որքա՞ն է ածխի արդյունահանման տարեկան չափը (արտահայտած՝ տոննայով):**

- 1) 6400000
- 2) 1562500
- 3) 2025000
- 4) 1350000

25 **«Պետություն – տիրապետող կրոն» սկզբունքով կազմված գույգերից ո՞րն է սխալ:**

- 1) Իրան-հուդայականություն
- 2) Ադրբեջան-մահմեդականություն
- 3) Ճապոնիա-սինտոիզմ
- 4) Վրաստան-քրիստոնեություն

26 **«Պետություն- պատկանող կղզի» սկզբունքով կազմված գույգերից ո՞րն է սխալ:**

- 1) Ֆրանսիա - Կորսիկա
- 2) Դանիա-Գրենլանդիա
- 3) Հունաստան-Կիպրոս
- 4) Ավստրալիա-Թասմանիա

27 **«Հողաբարելավման միջոցառում-բնական օբյեկտ» սկզբունքով տրված գույգերից ո՞րն է սխալ:**

- 1) չորացում (ցամաքեցում)- գերխոնավ հողեր
- 2) քիմիական մելիորացում-աղուտներ
- 3) արհեստական ոռոգում-մշակովի հողեր
- 4) հակաէրոզիոն միջոցառում- ձյունամերձ լանդշաֆտներ

28 **Ո՞ր պնդումն է ճիշտ:**

- 1) Վրաստանի կլիման արևելքում խոնավ է, արևմուտքում՝ չորային:
- 2) Վրացիները կազմում են երկրի բնակչության մոտ 98%-ը:
- 3) Վրաստանում տեղական մանգանի, ներմուծվող երկաթի հիման վրա աշխատում է Ռուսթավի լիքվ ցիկլի մետալուրգիական կոմբինատը:
- 4) Վրաստանի մակերևութային ընդարձակ հարթավայրերի շնորհիվ գյուղատնտեսական հանդակները զբաղեցնում են երկրի հողային ֆոնդի 90%-ը:

29 **Բնակչության բնական աճի ավելացման ուղղությամբ առավել ակտիվ ժողովրդագրական քաղաքականություն են վարում.**

- 1) Ինդոնեզիան և Հնդկաստանը
- 2) Չինաստանը և Պակիստանը
- 3) Ֆրանսիան և Գերմանիան
- 4) Նիգերիան և Մուդանը

30 **Խորհրդարանական հանրապետություններ են.**

- 1) Իտալիան և Իսրայելը
- 2) Ֆրանսիան և Հունաստանը
- 3) Ռուսաստանը և Վրաստանը
- 4) Ադրբեջանը և Բրազիլիան

31 «Պետություն-էլեկտրաէներգետիկայի մասնագիտացման ճյուղ» սկզբունքով կազմված գույգերից ո՞րն է սխալ:

- 1) Ֆրանսիա-ատոմային էներգետիկա
- 2) Իսլանդիա-ջերմային էներգետիկա
- 3) Նիդեռլանդներ-ջրային էներգետիկա
- 4) ԱՄՆ-ջերմային էներգետիկա

32 Ո՞րն պնդումն է ճիշտ:

- 1) Հացահատիկ արտահանող երկրներից են Եգիպտոսը, Ճապոնիան, Բրազիլիան, Հայաստանը:
- 2) Աքվակուլտուրան զարգացած է բարեխառն գոտու տափաստանների ու նոսրանտառների գոնայում:
- 3) Մերձարևադարձային և արևադարձային երկրները մասնագիտանում են ցիտրուսային պտուղների մշակման գծով:
- 4) Աշխարհում խոզերի գլխաքանակի շուրջ 50%-ը բաժին է ընկնում Ասիայի մահմեդական երկրներին (Իրան, Սաուդյան Արաբիա և այլն):

33 Կյանքի միջին տևողության ցածր ցուցանիշներ ունեն.

- 1) Մոզամբիկը և Անգոլան
- 2) Շվեդիան և Շվեյցարիան
- 3) Ճապոնիան և Ֆրանսիան
- 4) Ավստրալիան և Նոր Զելանդիան

34 Աշխարհում նավթ արտահանող առաջատար երկրներ են.

- 1) Իտալիան և Հունաստանը
- 2) Վենեսուելան և Նորվեգիան
- 3) Ֆրանսիան և Շվեյցարիան
- 4) Ուկրաինան և Թուրքիան

35 Տրված լճերից ո՞րն ունի սառցադաշտային ծագում:

- 1) Փարվանա լիճը
- 2) Քարի լիճը
- 3) Ուրմիա լիճը
- 4) Պարզ լիճը

36 Տրված «լեռներ-ծագում» սկզբունքով կազմված գույգերից ո՞րն է սխալ:

- 1) Եղնախաղի-հրաբխային
- 2) Բարգուշատի-ծալքաբեկորավոր
- 3) Գուգարաց-հրաբխային
- 4) Արևելյան Սևանի-ծալքաբեկորավոր

37 ՀՀ-ում ամենամեծ արտեզյան ավազանն է.

- 1) Սիսիանինը
- 2) Փամբակինը
- 3) Շիրակինը
- 4) Արարատյանը

57 Տրված կլիմայական գոտիներից ո՞րն է Եվրասիայում զբաղեցնում ամենամեծ տարածքը:

- 1) արկտիկական
- 2) բարեխառն
- 3) արևադարձային
- 4) հասարակածային

58 Ո՞ր գույգում տրված անապատներն են գտնվում Հարավային կիսագնդի արևադարձային կլիմայական գոտու սահմաններում:

- 1) Սահարա և Թար
- 2) Կարակում և Ավազային Մեծ անապատ
- 3) Ռուբ Էլ Խալի և Լիբիական անապատ
- 4) Կալահարի և Ատակամա

59 Ո՞ր գույգում տրված երկրներում է կյանքի միջին տևողության ցուցանիշը ամենացածրը:

- 1) Ճապոնիա և Նիգերիա
- 2) Ավստրալիա և Կանադա
- 3) Շվեդիա և Իրան
- 4) Անգոլա և Զամբիա

60 Տրված պնդումներից ո՞րն է ուրբանիզացիայի վերաբերյալ տեղեկատվություն (ինֆորմացիա) ներառում:

- 1) Բնակչության թիվն ու խտությունը մեծ է այն երկրներում ու տարածաշրջաններում, որտեղ բարձր է բնակչության վերարտադրությունը:
- 2) Բնակչության խտության ցուցանիշը տարածքի բացարձակ բարձրության մեծացմանը զուգընթաց նվազում է:
- 3) Եթե 1900թ. քաղաքներում էր ապրում աշխարհի բնակչության 13.3 %-ը, 1950թ.՝ 29.3%-ը, ապա 2008թ.՝ 50%-ը:
- 4) Հնդկաստանը, Չինաստանը ունենալով մարդկային և բնական հսկայական ներուժ, այնուամենայնիվ ՀՆԱ-ի 1 շնչի ցուցանիշով զիջում են զարգացած երկրներին:

61 Ռ-Ռ տրված քաղաքներից ո՞րն է այլումինի արտադրության խոշոր կենտրոն:

- 1) Իվանովո
- 2) Բրատսկ
- 3) Լիպեցկ
- 4) Կրասնոդար

62 Մեծ Բրիտանիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Հյուսիսային Եվրոպայում տարածքով ամենամեծ հանրապետությունն է:
- 2) Աշխատանքային ռեսուրսների գերակշիռ մասը ընդգրկված է տնտեսության սպասարկման ոլորտում:
- 3) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:
- 4) Արտահանության մոտ կեսը բաժին է ընկնում հանքային հումքին և վառելիքին:

51 Հորիզոնի ո՞ր կողմն է ցույց տալիս 225⁰ ազիմուտը:

- 1) հյուսիս - արևելքը
- 2) հյուսիս - արևմուտքը
- 3) հարավ - արևելքը
- 4) հարավ - արևմուտքը

52 Ժամը քանիսը կլինի Երևանում, եթե Լոնդոնում ժամը 12⁰⁰-ն է:

- 1) 9⁰⁰
- 2) 12⁰⁰
- 3) 15⁰⁰
- 4) 24⁰⁰

53 Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Վերնոլորտը մթնոլորտի Երկրի մակերևույթին ամենամոտ շերտն է:
- 2) Գիշերվա և ցերեկվա հերթափոխության գլխավոր պատճառը մթնոլորտի շրջանառությունն է:
- 3) Լեռնային շրջաններում ըստ բարձրության մթնոլորտային տեղումների քանակը նվազում է:
- 4) Օդի ջերմաստիճանի տատանման տարեկան լայնույթը հասարակածային լայնություններում փոքր է:

54 Տրված ապարներից ո՞րն է առաջանում, եթե մագման չի հասնում Երկրի մակերես, այլ սառչում է կես ճանապարհին, երկրակեղևի խորքում:

- 1) այրվող թերթաքար
- 2) կվարց
- 3) գրանիտ
- 4) կերակրի աղ

55 Համաշխարհային օվկիանոսում ներծին (ներքին) ուժերի ազդեցությամբ առաջանում է՝

- 1) մակընթացություն
- 2) տեղատվություն
- 3) ցունամի
- 4) օվկիանոսային հոսանք

56 Մերձարևադարձային գոտու կլիմայի տիպերից որի՞ն են բնորոշ չոր և տաք ամառներ և մեղմ ու խոնավ ձմեռներ:

- 1) ցամաքային
- 2) միջերկրածովային
- 3) մուսսոնային
- 4) խոնավ

38 Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Միջերկրական ծովի կողմից եկող օդային զանգվածներն Աղստևի հովտով անցնում են Փամբակի գոգավորություն՝ բերելով շատ խոնավություն:
- 2) ՀՀ-ում առավելագույն տեղումները թափվում են ձմռանը, նվազագույնը՝ մայիս-հունիսին:
- 3) Չոր, խիստ ցամաքային կլիման ձևավորվում է Արարատյան դաշտի մինչև 1000մ բարձրություններում:
- 4) ՀՀ-ում ցածրադիր գոտու համեմատ միջին բարձրության լեռնային գոտում տեղումների քանակը նվազում է՝ հասնելով 230-300մմ:

39 Ո՞ր պնդումն է սխալ:

- 1) ՀՀ խաղողագործական շրջաններ են Արփայի հովիտը և Ջանգեզուրի հարավը (Մեղրի):
- 2) Սևան-Հրազդան ոռոգչաէներգետիկ համակարգի միջոցով սնվում են Արարատյան դաշտի մի շարք մայր ջրանցքներ:
- 3) ՀՀ-ում ձկնաբուծությունը զարգանում է նաև Արարատյան դաշտի աղակալած հողերում ստեղծված արհեստական լճակներում:
- 4) ՀՀ ամբողջ տարածքում անասնապահությունը զարգացել է բացառապես բնական արոտային թարմ խոտի բազայի վրա:

40 ՀՀ-ում ոչ տեղական հումքի վրա հիմնված մետաղաձուլության արտադրություն է.

- 1) ոսկունը
- 2) մոլիբդենինը
- 3) պղնձինը
- 4) ալյումինինը

41 Արագածոտնի մարզում ո՞ր մայր ջրանցքների շնորհիվ են ընդլայնվել ոռոգովի հողատարածքները:

- 1) Շիրակի և Լոռու
- 2) Թալինի և Արզնի Շամիրամի
- 3) Լոռու և Նալբանդի
- 4) Մասրիկի և Կոտայքի

42 Տրված մարզերից ո՞րը միայն մեկ մարզի հետ ունի ընդհանուր սահման:

- 1) Արմավիրի մարզը
- 2) Սյունիքի մարզը
- 3) Շիրակի մարզը
- 4) Տավուշի մարզը

43 Այժմ ՀՀ երկաթուղային ցանցի միջին խտությունը կազմում է մոտ.

- 1) 22 կմ/1000կմ²
- 2) 25 կմ/1000կմ²
- 3) 30 կմ/1000կմ²
- 4) 35 կմ/1000կմ²

44 Ջրի կենսաբանական մաքրման մեթոդը հիմնված է.

- 1) ջրլող թռչունների փետուրների կլանման հատկության վրա
- 2) մանրէների կենսագործունեության օգտագործման վրա
- 3) խեցգետինների՝ ջրի մեջ լուծված նյութերով սնվելու վրա
- 4) հոսող ջրի պոտենցիալ էներգիայի օգտագործման վրա

45 Անագի պաշարներով հարուստ է.

- 1) Գերմանիան
- 2) Նիդեռլանդները
- 3) Ինդոնեզիան
- 4) Վրաստանը

46 Աշխարհում ամենաշատ ջուր սպառվում է.

- 1) արդյունաբերության մեջ
- 2) կոմունալ-կենցաղային տնտեսության կողմից
- 3) գյուղատնտեսության մեջ
- 4) ջրամբարներում ջրի կուտակման արդյունքում

47 Ընդերքի ռեսուրսների արդյունավետ օգտագործում է.

- 1) հանքավայրերում աղքատ պաշարներով թափոնների կուտակումը
- 2) պոչամբարներում չկորզված նյութերի կուտակումը
- 3) ընդերքի ռեսուրսների համալիր յուրացումը
- 4) հանքարդյունահանման հին ավանդական մեթոդների վերականգնումը

48 Մթնոլորտի ստորին շերտի տաքացումը ջերմոցային գազերի ու երկրի մակերևույթից արձակվող երկարալիք ճառագայթների կողմից կոչվում է.


- 1) ջերմոցային էֆեկտ
- 2) ջերմաստիճանային շրջադասություն (ինվերսիա)
- 3) ջերմաստիճանի տատանման լայնույթ
- 4) ջերմոցային տնտեսություն

49 Քարտեզի վրա Թեղե-
նիս գագաթը n°ր տա-
ռով է նշված:

- 1) Ա
- 2) Բ
- 3) Գ
- 4) Դ

50 Քարտեզի վրա Դիլի-
ջան քաղաքը n°ր տա-
ռով է նշված:

- 1) Ե
- 2) Զ
- 3) Է
- 4) Ը



44°

46°